25/08/2020 թ
Ժամը 17:00 թիվ՝ 2

Հարակադիր կատարումն ապահովող ծառայություն
ք. Երևան Հալաբյան 41ա

Արձանագրություն

ՀԿԱԾ-ԳՀԱՊՁԲ-20/37 ծածկագրով գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝
Նախագահ՝ Ա. Նազարյան
անդամներ՝ Ա. Խաչատրյան
Տ. Հակոբյան
Վ. Սաղաթելյան
Ս. Խաչատուրյան
քարտուղար՝ Ա. Խաչատրյան

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի /այսուհետև՝ Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված

Հայտերի բացման նիստի մասին

Հանձնաժողովի նախագահ Ա. Նազարյան

1. Հրավերի պահանջների նկատմամբ մասնակիցների ներկայացարծ ապրանքների ամբողջական նկարագրերի համապատասխանության մասին.

1.1 Էյ Դաբլյու Այ Գրուպ ՓԲԸ-ի ներկայացրած ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում են գնման ընթացակարգի հրավերի պահանջներին,

իսկ ԱՏԱ ՍՊԸ-ի ներկայացրած ապրանքների ամբողջական նկարագրերը չեն համապատասխանում գնման ընթացակարգի հրավերի պահանջներին, մասնավորապես՝

ԱՏԱ ՍՊԸ-ի ներկայացրած ապրանքների ամբողջական նկարագրերում բոլոր չափաբաժինների համար ներկայացրած *ֆիրմայի անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը* սունյակներում նշված չէ անվանումները, սակայն պահանվում է նշել վերը նշված տվյալները:

1.2 Մասնակիցները հայտում ներառված փաստաթղթերը կազմել և ներկայացրել է հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ Արմեն Եսայան Աշոտի ԱՁ-ի կողմից ներկայացված հայտերի, որտեղ Արմեն Եսայան Աշոտի ԱՁ-ի կցված փաստաթղթերը չեն վերաբերվում տվյալ գնման ընթացակարգին և ներկայացվել է այլ ծածկագրով գնման ընթացակարգի փաստաթղթեր:

1.3 Արմեն Եսայան Աշոտի ԱՁ-ի հայտը մերժվել է ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն:.

2.1 Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 41-րդ կետով և հրավերի 8.9-րդ կետով որոշեց՝ կասեցնել գնահատող հանձնաժողովի սույն նիստը և ծանուցել՝ ԱՏԱ ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացրած տեխնիկական բնութագրերում հրավերի նկատմամբ առկա անհամապատասխանությունները:

Հաձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ԱՏԱ ՍՊԸ-ին վերը նշված ծանուցումը ուղարկելու օրվան հաջորդող 2-րդ աշխատանքային օրվա ժամը 11:00-ին:

Ընդունել որոշում կողմ **5** ***(հինգ),*** դեմ ***0 (զրո)*** ձայներով

Նախագահ՝ Ա. Նազարյան _____

անդամներ՝ Ա. Խաչատրյան _____

Տ. Հակոբյան _____

Վ. Սաղաթելյան _____

Ս. Խաչատուրյան _____

քարտուղար՝ Ա. Խաչատրյան _____